

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. Խաչակիրները և հայերը: Հ. Ա. Ուսումնասիրություն և թարգմանություններ, *Երևան, 2005, 552 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկյանցի հիմնարկություն):*

Մերձավոր Արևելքի և կիլիկյան Հայաստանի անցյալն ընկալելու, համաշխարհային առաջընթացի ուղիները հասկանալու համար պատմագրության մեջ կարևոր նշանակություն է ձեռք բերել խաչակրաց ռազմարշավների ու Միջերկրականի արևելյան ամերիկյան XI–XIV դդ. գոյատևած քրիստոնյա պետությունների պատմության հետազոտությունը: Խաչակրաց ռազմարշավների, Հայաստանի պատմության վրա այդ իրադարձության թողած քաղաքական և մշակութային հետևանքների մասին հայագիտության մեջ բավականաչափ գրվել է: XIX դարում, երբ Ղևոնդ Ալիշանը ձեռնամուխ եղավ Կիլիկիայի հայկական պետության պատմության համակողմանի հետազոտությանը¹, Եվրոպայում նոր էր սկսվել խաչակրաց դարաշրջանի սկզբնաղբյուրների հատորային հրատարակությունը²: Այդ ժամանակ ֆրանսիացի գիտնականներ Վիկտոր Լանգլուայի³ և Էդուարդ Դյուրրիեի⁴

ջանքերով հիմք դրվեց խաչակրաց դարաշրջանի հայկական սկզբնաղբյուրների հրատարակությանն ու եվրոպական լեզուներով թարգմանությանը: XX դարի ընթացքում Եվրոպայում այդ ուսումնասիրություններն ավելի խորացվեցին, գրվեցին համակողմանի հետազոտություններ խաչակրաց ռազմարշավների վերաբերյալ, որոնց մեջ նույն ընդհանրացնելու տեսանկյունից շրջադարձային է Ք. Սեթոնի խմբագրած վեցհատոր «A History of the Crusades» հետազոտությունը⁵: Եթե համեմատենք համաշխարհային պատմագրության հետ, XX դ. հայագիտության նվաճումներն այս բնագավառում բավական համեստ են⁶, թեպետ խաչակրաց ռազմարշավների պատմությունը ուղղակիորեն է կապված Հայաստանի, հատկապես Կիլիկիայի հայկական պետության անցյալի և հայալեզու սկզբնաղբյուրների հետազոտության հետ: Այդ բացը, հավանաբար, գալիս է նրանից, որ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած խաչակրաց ռազմարշավներին անդրադառնում են ժամանակի լատին (ֆրանսիական, գերմանական, իտալական, անգլիական, իսպանական և այլն), բյուզանդական, արաբական, հայկական, ասորական, պարսկական, թյուրքական, երբայական, վրացական, դպտական, էթովպական, սլավոնական սկզբնաղբյուրները, որոնցից շատերը, մեզանում այդ բնագավառների պատմության և սկզբնաղբյուրներ

¹ Միսուան. համագրություն հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի Ղևոնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1885.

² Կարևորագույն շարքերից արժե թվարկել երկուսը. Recueil des Historiens des Croisades-ը (REC) և Archives de l'Orient latin (1881-1884, երկու հատոր): Հիշատակվածներից առաջինը հրատարակվել է 1841-1906 թթ. ընթացքում: Այստեղ հինգական հատոր հատկացված է արևմտյան և արևելյան (արաբական) սկզբնաղբյուրներին, երկուական հատոր՝ հունարեն, հայերեն վավերագրերին ու խաչակրաց իրավունքի հուշարձաններին: Խաչակրաց պատմության սկզբնաղբյուրների ֆրանսիական նոր շարքի հրատարակությունը շարունակվում է մինչև այսօր, տե՛ս Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Academie des Inscriptions et Belles-Lettres, որի 18-րդ հատորը հրատարակվել է 2003 թ.: Վերջին հատորի վերաբերյալ մեր գրախոսականը տե՛ս ՊԸՀ, 2004, № 3, էջ 289-293.

³ Le Trésor des chartres d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens.../ Recueillis,

mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par V. Langlois, Venise, 1863.

⁴ Տե՛ս REC, Documents Arméniens, t. I, 1869.

⁵ Գիրքը հրատարակվել է 1955-1989 թվականներին:

⁶ Կատարված աշխատանքների մեջ հիշատակելի են Կ. Բասմաջյանի, Գ. Միքայելյանի, Ս. Բոննազյանի, Մ.-Ե. Քասունու, Ա. Սուրիասյանի, Հր. Բարթիկյանի, Մ. Զուլայանի, Կ. Մուրաֆյանի, Ժ. Դեդեյանի, Ա. Բոգոյանի և այլոց հետազոտությունները:

րի մասնագետների բացակայության պատճառով, համապատասխան ուշադրության չեն արժանացել: Խաչակրաց շրջանի պատմության խնդիրների շուրջ XX դ. ստեղծվել է ծովածավալ մի գրականություն⁷ աշխարհի գրեթե բոլոր լեզուներով, որն էլ դժվարացրել է Հայաստանում այդ բնագավառի հետազոտությունն ու մասնագետների պատրաստումը: Այդ դժվարությունների մեջ կարևոր խնդիրներից է նաև համապատասխան գրականության պակասը Հայաստանում, առանց որի հայթայթման հնարավոր չէ բնագավառի համակողմանի հետազոտությունը:

Այս բացը հաղթահարելու ճանապարհին հայագիտության համար բացառիկ նշանակություն է ստանում խաչակրաց շրջանի սկզբնաղբյուրների⁸, մասնագիտական հետազոտությունների թարգմանությունն ու մատուցումը⁹ Հայաստանի գիտական հասարակությանը, ուսանողությանն ու ընթերցողին: Հայագիտության համար այդ պատասխանատու բնագավառում ներ-

⁷ Ցավոք, այդ գրականության միայն փշրանքներն են հասնում Հայաստան: Այս առումով հատկանշական է վերջերս լույս տեսած ժերար Դեդեյանի գրքի մատենագիտությունը (Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisades: Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1150), Volume 2, Lisbonne 2003, p. 1341-1417), ուր բերված է հարցի պատմությանը վերաբերող գրականությունը:

⁸ Այս տեսանկյունից 1930-ական թվականներին չափազանց կարևոր նախաձեռնություն էր իրականացնում Հովհաննես Հակոբյանը, որը եվրոպական «Ուղեգրություններ»-ի իր թարգմանած Ա հատորում (Երևան, 1932) ներկայացնում է Ռուբրուքի, Մարկո Պոլոյի և այլոց Հայաստանի նկարագրությունները: XIII դարի ասորական սկզբնաղբյուրներից մեծ կարևորություն ունի Լ. Տեր-Պետրոսյանի կողմից Անանուն Եղեսացու ժամանակագրության ծանոթագրված թարգմանությունը (Երևան, 1982), իսկ արաբական սկզբնաղբյուրներից Իբն ալ-Ասիրի երկի Ա. Տեր-Ղևոնդյանի թարգմանությունը (Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981):

⁹ Ռ. Գրուսեի եռահատոր «Խաչակրաց պատմության» Գիլիկյան Հայաստանին առնչվող դրվագների վերապատման արդյունք է Ս. Պապիկյանի «Հայերը և խաչակիրները» հոդվածաշարը, որը հրատարակվել է «Հանդես ամսօրյա»-ի 1961-63 թթ. համարներում:

կա գրքով իր լուսման է ներդնում Լևոն Տեր-Պետրոսյանը՝ հայագետների ուշադրությունը հրավիրելով XX դ. համաշխարհային պատմագրության մեջ խաչակրաց Արևելքի քաղաքական փոխհարաբերություններում Գիլիկիայի հայկական պետությանը հատկացված դերին:

«Երկու խոսք»-ում հեղինակն անդրադառնում է այս հատորի հետապնդած նպատակին՝ հայ ընթերցողին ներկայացնել «եվրոպական միջնադարագիտության ակադեմիկոսները ներկայացուցիչների մի շարք հանրահայտ աշխատություններ, որոնք, նվիրված լինելով Բյուզանդիայի կամ խաչակրաց արշավանքների պատմությանը, միաժամանակ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ ու վերլուծություններ են պարունակում խաչակիրների և հայերի հարաբերությունների մասին» (էջ 3): Գրքում թարգմանված են համաշխարհային պատմագրության դասականներ Ֆերդինանդ Շալանդոնի, Ռընե Գրուսեի, Ստիվեն Ռանսիմենի, Քենեթ Սեթոնի (Միրարփի Տեր-Ներսեսյանի հեղինակած մասը) խաչակրաց արշավանքներին վերաբերող աշխատություններից կիլիկյան Հայաստանի պատմությանն առնչվող հատվածները, քանի որ «այս հրատարակությունները մինչ այժմ դուրս են մնացել Հայաստանի ընթերցող լայն հասարակության, ինչպես նաև պատմաբաններից շատերի ուշադրությունից» (էջ 4): Գնահատելով թարգմանությամբ ներկայացված հեղինակների ավանդը Գիլիկիո Հայոց թագավորության պատմության հետազոտության գործում, հեղինակն ընդգծում է Ռ. Գրուսեի բացառիկ առաքելությունը:

Ակնարկելով, որ թարգմանված հետազոտությունները ժամանակի առումով դուրս-ինչ հնացած են և չեն ներկայացնում գիտության վերջին խոսքն այս բնագավառում, Լ. Տեր-Պետրոսյանը տեղեկացնում է, որ ֆրանսերենից և անգլերենից կատարված ներկա թարգմանությունները օժտել է գիտության ժամանակակից վիճակը ներկայացնող ծանոթագրություններով, որոնք հիմնականում խարսխված են հայկական սկզբնաղբյուրների և նորագույն գրականության հաշվառման վրա:

Ներածությունն անվանված է «Խաչակրաց արշավանքները և Արևելքում հիմնված

լատինական պետությունները», ուր հեղինակն ընդհանուր գծերով անդրադառնում է Ֆրանսիայի Կլեմոնտ քաղաքում 1095 թ. սկզբնավորված շարժման գիտական բնութագրմանը, շրջանառության մեջ եղած եզրերի (խաչակրաց ռազմարշավները բնորոշող) ճշգրտմանը, ռազմարշավների ժամանակագրության հստակեցմանը: Այնուհետև առանձին հատվածներում անդրադառնում է խաչակրությունը ծնող պատճառների և նախադրյալների բնութագրմանը, մասնակիցների շահագրգռություններին, համաշխարհային քաղաքականության մեջ այդ երևույթը ծնող դրդապատճառներին ու խթաններին, Եվրոպայում շարժումը նախաձեռնողների մտադրություններին: Լ. Տեր-Պետրոսյանի նպատակակետերից մեկն էլ ռազմարշավների նախօրյակին և ընթացքում Մերձավոր Արևելքում ստեղծված քաղաքական իրադրության բացահայտումն է խաչակրաց պետությունների պատմության լայն ֆոնի վրա: Հեղինակն ընդհանուր պատկերացում է տալիս առաջին խաչակրաց ռազմարշավի բանակների սոցիալական կազմի, դեկավարների ու աշխարհագրական միջավայրի վերաբերյալ, շարժում, որի ընթացքում խաչաձևվել են Մերձավոր Արևելքի տարբեր ժողովուրդների ճակատագրերը: Առանձին-առանձին անդրադառնում է այդ ռազմարշավի ընթացքում Ասորիքում և Պաղեստինում ստեղծված հիմնական պետական միավորումների (Եդեսիայի կոմսություն, Անտիոքի իշխանապետություն, Երուսաղեմի թագավորություն, Տրիպոլիի կոմսություն, ինչպես նաև հետագայում ստեղծված Կիպրոսի թագավորություն) պատմությանը, իսկ վերջում փորձում է ի մի բերել «խաչակրաց արշավանքների արդյունքները»:

Ներածությունը հայերենով գրված առաջին մատչելի շարադրանքն է կիլիկյան Հայաստանի հարևանությամբ գործած խաչակրաց պետական միավորների պատմության, ուր բազմակողմանի անդրադարձ կա նաև մուսուլմանական տերությունների և հարևան պետական միավորումների քաղաքական փոխհարաբերությունների մասին: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել կիլիկյան Հայաստանի և խաչակրաց պետությունների իշխող ընտանիքների ամուսնական կապերը, ո-

րոնք այդ երկրների արտաքին քաղաքականության կարևոր որոշիչներն են եղել: Այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը քայլ առ քայլ հիմնական գծերով ներկայացնում է Եդեսիայի կոմսության շուրջ կեսդարյա պատմությունը՝ անդրադառնալով այդ տարածքում ծվարած հայկական իշխանությունների (Թորոս կուրուպաղատ, Գող Վասիլ, Վասիլ Տղա, Դավթուկ, Գաբրիել, Ապլղարիբ և այլն) և հարևան սելջուկյան պետական միավորումների, լատին իշխանությունների, Բյուզանդական կայսրության միջև ծավալված պայքարին: Նույն չափորոշիչներով (պարամետր) հեղինակն անդրադառնում է նաև խաչակրաց մյուս պետությունների պատմությանը՝ ընդգծելով հայկական քաղաքական միավորների հետ դրանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Հեղինակն ուշադրություն է դարձնում հայկական սկզբնաղբյուրներում և գիտական գրականության մեջ Անտիոքի իշխանապետությունը բնորոշող տերմիններին (էջ 54-55), հպանցիկ անդրադառնում է Դաշտային Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի իշխանապետության հավակնություններին (էջ 60, 66), Անտիոքի և Կիլիկիայի իշխանությունների միավորման նպատակ հետապնդող Լևոն I (1198-1219) Ռուբինյանի քաղաքականությանը (էջ 66-68): Հատկանշական են խաչակրաց պետությունների հետ փոխհարաբերություններում ամուսնական կապերի դերի բացահայտման գործում Լ. Տեր-Պետրոսյանի ջանքերը: Հատկապես կարևոր է անդրադարձը Կիպրոսի թագավորության անկման ժամանակաշրջանի պատմությանը, քանի որ այդ կղզու միապետները իրենց տիրոջաշարի մեջ էին ներառել նաև «Հայոց թագավոր» անվանումը:

Ներածության վերջում Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է խաչակրաց ռազմարշավների արդյունքներին և համաշխարհային պատմագրության մեջ այդ դարաշրջանի գնահատականներին՝ ընդգծելով Մերձավոր Արևելքի ժողովուրդներին պատճառած մշակութային, քաղաքական և բարոյական վնասի ահռելիությունը: Այստեղ կարելի էր նաև ընթերցողի ուշադրությունը հրավիրել խաչակրաց ձեռնարկին մասնակցած եվրոպական պետական միավորների քաղաքական և տնտեսական հա-

կամարտության վրա, որը սկզբից ի վեր ներսից ջլատում էր առաջ քաշված «վեհ» գաղափարը: Հատկանշական է հատկապես ջենովական և վենետիկյան առևտրական հանրապետությունների անգիջում մրցակցությունը, որի հետևանքները հատկապես ճակատագրական եղան Կիլիկիայի և Կիպրոսի թագավորությունների պատմության համար: Խաչակրաց ռազմարշավների պատմությունը «լուսանցային» համարելով «պատմական հեռանկարի տեսանկյունից»՝ Լ. Տեր-Պետրոսյանը կարծես թե զանց է առնում Մերձավոր Արևելքում տեղի ունեցող այսօրվա տեղաշարժերը: Ներածության մեջ XII դ. 60-ական թվականներին Երուսաղեմի թագավորության կողմից Եգիպտոսը նվաճելու ձեռնարկների մասին խոսելիս (էջ 85), կարծում ենք, արժեք անդրադառնալ Բյուզանդիայի կայսր Մանուել Ա. Կոմենենոսի եգիպտական քաղաքականությանը, որին բավական տեղ է հատկացնում իր աշխատանքում Ֆ. Շալանդոնը¹⁰: Ավելին, գրքում պետք էր ընդգծել Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական շահագրգռությունների խաղացած դերը, մանավանդ՝ Դեպրոլի հաշտության պայմանագրում (1108 թ.) արձանագրված կետերի նշանակությունը տարածաշրջանի հետագա պատմության վրա:

Այստեղ, իհարկե, կարելի է անդրադառնալ Լ. Տեր-Պետրոսյանի մի քանի մոտեցումներին, որոնց նկատմամբ հայագիտությունը հետայսու պետք է ավելի հետևողական դիրքորոշում որդեգրի: Խոսքս հիմնականում վերաբերում է տերմինների օգտագործմանը՝ հատկապես Սիրիա, թուրքմեն, թուրք: Միջնադարյան հայկական սկզբնաղբյուրները Սիրիայի փոխարեն օգտագործում են Ասորիք¹¹ տեղանունը, որը, կարծում են, ավելի ընտանի է մեր ականջին և հետևողականորեն կիրառված է հայ միջնադարյան պատմագրության մեջ, իսկ ինչ վերաբերում է թուրքմեն տերմինին, որով անվանվում է սելջուկ, Մերձավոր Արևելքի նախաօսմանյան քաղաքական միավորների բնակչությունը, XIV–XVII դարերում տարա-

ճաշրջան ներխուժած ցեղախմբերից տարբերակելու համար կարելի էր օգտագործել թուրք ձևը, որը կիրառված է XX դարի հայ պատմագրության մեջ և համահունչ է ռուս և օտար պատմագրությամբ շրջանառության մեջ դրված եզրին: Հայերենին հարիր չէ նաև «Ջանգիդյան», «Լևանտ» ձևերը: Մի շարք տեղանունների և անձնանունների օգտագործման դեպքում կարելի էր ընթերցողի ուշադրությունը հրավիրել դրանց միջնադարյան հայկական տարբերակների վրա. օրինակ՝ «Տյուրոս»=«Սուր»¹², «Ռեյնալդ»=«Ռընադոս» և այլն: Հեթում Կոռիկոսցու գործունեությանն անդրադարձած հեղինակներին հիշատակելիս (էջ 121) Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է Գոհար Կարագյոզյանի հոդվածը¹³, թեպետ հեղինակի նպատակը խնդրի մասին կատարյալ մատենագիտություն տալը չէ:

Գրքում հայ ընթերցողին են ներկայացվում ֆրանսիացի բյուզանդագետ Ֆերդինանդ Շալանդոնի «Les Comnènes: Etudes sur l'empire Byzantin aux XIe et XIIe siècle» մենագրության երկրորդ հատորի «Հայկական իշխանությունների կազմավորումը Կիլիկիայում. հայերը, խաչակիրները և Բյուզանդական կայսրությունը, Հովհաննես Կոմենենոսը և հայոց իշխան Լևոնը. Կիլիկյան արշավանքը» (II, էջ 93-118), «Հունական կայսրությունը և նրա արևելյան հարևանները. Թորոսի ապստամբությունը. Փոքր Ասիայի մահմեդականների առաջխաղացումը. Ռեյնալդ Շատիլոնցին Կիպրոսում. Մանուելը Կիլիկիայում և Անտիոքում (1159 թ.). պայքար Փոքր Ասիայի մահմեդականների դեմ (1159-1164 թ.)» (II, էջ 417-455) հատվածները: Ֆ. Շալանդոնի մոտեցումներն ավելի

¹² Ելնելով Լ. Տեր-Պետրոսյանի՝ տեղանուններից ազգանուն կազմելու սկզբունքից (Պուստիեցի, Կուրտենեցի, Սենժիլցի, Մոնֆերատցի, Շամպայնացի, Իբելինացի)՝ պետք էր փոխել պատմիչին անվանել Տյուրոսցի և ոչ թե Տյուրացի: Օգտվելով հայերենի ընձեռած հնարավորությունից, կարելի էր գրել նաև Կուրտենցի, Շամպայնցի, Իբելինցի և այլն.: Կարծում են հեղինակի կիրառած անձնանունների և տեղանունների հայացման այս ուսանելի մոտեցումը կշարունակվի նաև հետագայում:

¹³ Գ. Կարագյոզյան. Հեթում պատմիչը և միջնադարյան ֆրանս-հայկական գրական կապերը. – Հայ գրականության միջազգային կապերը. 2, Երևան, 1987, էջ 5-20:

¹⁰ F. Chalandon, Les Comnènes, t. II, p 535-553.

¹¹ Գրքում օգտագործվում է նաև Ջագիրա (էջ 79 և այլն.) տերմինը: Կարծում են այս եզրերի իմաստները պետք է բացվեին ընթերցողի համար:

ամբողջական կլինեին, եթե թարգմանվեին նաև ֆրանսիացի պատմաբանի գրքի 527-533 էջերը, ուր խոսվում է Բյուզանդիայի և կիլիկյան Հայաստանի 1159-1180 թթ. փոխհարաբերությունների մասին:

Որնե՞ս Գրուսեի «Histoire des croisades et du royaume France de Jerusalem» եռահատոր մենագրությունից թարգմանված են Բագրատունյաց թագավորության անկումից հետո Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում ստեղծված հայկական ռազմաքաղաքական միավորումների (Ֆիլարտոս, Թորոս Եղեսացի, Գոդ Վասիլ, Տղա Վասիլ և այլն), Հայոց կաթողիկոսության, Ռուբինյան իշխանության և թագավորության XI-XIV դդ. պատմության անընդհատ հատվածները (I, էջ XL-XLIV, LVIII-LX, 43-68, 378-381, 388-394, 435-439, 442-443, 454-456, 472-476, 489-494, 589-594, 671-673, II, էջ 50-53, 86-88, 176-178, 195-196, 198-201, 291-292, 305, 332-335, 399, 408-410, 474-475, 566-569, 580-583, 602-604, 683-684, 696-697, III, էջ 15-16, 127-133, 194-195, 246-270, 363-366, 515-516, 526-529, 611-637, 695-696, 699-701, 726-727), ուր համաշխարհային պատմության ետնախորքի վրա լուսաբանվում են Մերձավոր Արևելքի իրադարձությունները:

Ռ. Գրուսեի «L'empire du Levant: histoire de la question d'Orient» գրքից թարգմանվել է Փոքր Հայաստանը (Կիլիկիա) հատվածը (էջ 385-416), որը բաղկացած է երկրի քաղաքական պատմությանը (Տավրոսի բնակեցման սկիզբը, Ռուբինյան տոհմի սկզբնավորումը, Բյուզանդացիների վերջնական վտարումը, Լևոնի գահակալությունը, Հեթումյան դինաստիա, Լուսինյան հարստություն), հաստատություններին և քաղաքակրթությանը (Հայոց թագավորությունն ու ֆրանկների ազդեցությունը, հայկական հակազդեցությունը ֆրանկականացման դեմ, Հայոց եկեղեցին Ռուբինյան շրջանում, Հայոց եկեղեցին, Բյուզանդիան և Սուրբ Աթորը, Կիլիկիո Հայոց թագավորությունը և Լևանտի առևտուրը) նվիրված բաժիններից:

Ս. Ռենսիմենի քաջածանոթ «A History of the Crusades» եռահատոր մենագրությունից թարգմանվել է «Հայկական միջնաբերդ» հատվածը (հ. Ա, էջ 195-212), իսկ Բ. Մեթոնի «A History of the Crusades» գրքից՝ Միրարփի

Տեր-Ներսեսյանի «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» հոդվածը:

Թարգմանությունների արժեքը մեծացնում են Լ. Տեր-Պետրոսյանի ծանոթագրությունները, ուր հայկական սկզբնաղբյուրների ու նորագույն գրականության օգտագործմամբ վերանայված են դարաշրջանի պատմության մի շարք դրվագներ և հայագետների ու շաղղությունն է հրավիրված XI-XIV դդ. Մերձավոր Արևելքի պատմության նորովի մեկնաբանության արժանի խնդիրների վրա:

Գիրքն ունի երկու հավելված, որոնցից մեկն անվանված է «Ռոռոջ նկատառումներ Սամուել Անեցու Ժամանակագրության վերաբերյալ», իսկ մյուսը ներկայացնում է «Սամուել Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը»: Աշխատանքի այս հատվածը ևս ուշագրավ է, քանի որ հրապարակվում է Կիլիկիայի պատմությանը վերաբերող նոր սկզբնաղբյուր:

Վերջում բերվում է օգտագործված գրականության, անձնանունների և տեղանունների ցանկեր, Լատինական Արևելքի, Եղեսիայի, Անտիոքի, Տրիպոլիի, Երուսաղեմի, Կիպրոսի և Կիլիկիայի պետությունների պատմական քարտեզներ:

Գրքի ցանկերը կատարված են արտակարգ խնամքով, թեպետ կարելի էր ավելի ռացիոնալ դարձնել դրանք: Նույն անվանման առանձին տարբերակները ցանկում երբեմն մեկ միավոր է, երբեմն՝ մի քանի: Օրինակ՝ Գաստոն (Գաստին, Գաստուն)՝ մեկ միավոր է, իսկ Դամասկոս (Դմշկ, Դմրշխ), Հռոմկլա (Կլալ, Ռանկուլաթ) տեղանունները նաև առանձին միավորներ են: Պետք է հաստույ ընդգծել Լ. Տեր-Պետրոսյանի մեծ ներդրումը հայագիտության մեջ խաչակրաց ժամանակաշրջանի անձնանունների և տեղանունների ունիֆիկացված (միասնականացված) տարբերակներ ստեղծելու գործում, քանզի դրանք վկայված են տարբեր դարաշրջաններում և այլևայլ լեզուներով:

Աշխատանքն աչքի է ընկնում պարզ, սակայն հազեցված շարադրանքով: Լեզվի առումով այն լավ խնամված է: Ցանկանք հեղինակին նոր հաջողություններ: Օր առաջ սպասում ենք գրքի երկրորդ հատորին:

ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆ